

երկու էջերի լուսանկարներ³: Ժամանակագրութեան իրական հեղինակը Գորգ անունով ժամանակագիրն է, որն ապրել է 805 թուականից յետոյ (ժամանակագրութիւնն աւարտուել է նշուած թուականով):

Խնդրոյ առարկայ ժամանակագրութիւնը մեզ հասել է 13-րդ դարի ժամանակագիր Յովհաննէս Աւագերէցի ժամանակագրութեան կազմում⁴: Յովհաննէսն էլ իր հերթին շարունակել է ժամանակագրութիւնը, սկսելով Գորգի գրանցած վերջին թուականից: Նա արտագրել է նաեւ ժամանակագրութեանը վերաբերող յիշատակագրութիւնը. «Այս Գորգ էր գոհացող, որ փոխեաց Ղուկասու գրած Կայսերքս եւ այլ իմն արար, որպէս եւ ինքն կամեցաւ: Եւ Տէր ողորմի իւր մէնն»⁵: Այստեղ «գրած» բառը գործածուած է «արտագրած» իմաստով: Ղուկասուր ոչ թէ գրել, այլ արտագրել է

«Ղուկասու գրած Կայսերքը» հայագիտութեանը յայտնի է «Կայսերաց գիրք» անուամբ: Այն առանձին վերնագրի տակ ընդօրինակուած է Մատենադարանի այն միեւնոյն ձեռագրում, որում գտնուում է նաեւ Յովհաննէս Աւագերէցի ժամանակագրութիւնը: Գորգի ժամանակագրութեան յիշատակարանում բերուած է վերնագրի միայն առաջին բառը: Ամբողջ վերնագիրն է. «Կայսերք Հոռովմոց, թէ որչափ ամք կալան կամ ամիսք եւ զինչ գործք գործեցան»⁶: Հեղինակն է Անանիա Շիրակացին: Ժամանակագրութիւնն աւարտուում է 685 թուականին:

«Փոխեաց Ղուկասու գրած Կայսերքս» արտայայտութիւնը նշանակում է Գորգը վերափոխեց Ղուկասի արտագրած «Կայսերքը», այսինքն՝ վերածեց աղիւսակի: Եւ իսկապէս, Թղթեայ ձեռագրի 49բ-71բ էջերում Ղուկասի ձեռքով արտագրուած Անանիա Շիրակացու «Կայ-

սերքը» Գորգը վերածել է ժամանակագրական աղիւսակի: Այն գտնուում է Թղթեայ ձեռագրի 158բ-164ա էջերում, Յովհաննէս Աւագերէցի ժամանակագրութեան կազմում:

Յիշատակագրութիւնում յայտնուում է, որ Գորգը չի սահմանափակուել «Կայսերքով» այլ կատարել է նաեւ փոփոխութիւններ. «այլ իմն արար, որպէս եւ ինքն կամեցաւ»: Բացի «Կայսերքից» նա աղիւսակը կազմելիս օգտագործել է նաեւ Հիպոդիտոսի ժամանակագրութեան Ալեքսանդրեան խմբագրութիւնը⁷, Եւսեբիոսի «Քրոնիկոնն» ու «Եկեղեցական պատմութիւնը», Եպիփան Կիպրացու «Կարգաւորութիւն թարգմանչաց» երկը, Մովսէս Խորենացու «Կարգաւորութիւն թարգմանչաց» երկը, Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնը» եւ այլ աղբիւրներ:

Յովհաննէս Աւագերէցի ժամանակագրութիւնը, որի կազմում գտնուում է Գորգի աղիւսակը, ունի յետեւեալ յիշատակարանը. «Տէր Յիսուս Քրիստոս... որորմեա... Մեղաւոր աւագերէց Յովհաննիսի՝ որդւոյ Գիշի, որ զգրքունկս գնեցի եւ յետ ՄԾԴ ամի զցանկս յարիմեցի ի ՈՀԴ թուականին» (էջ 165ա): Թարգմանութիւնն է. «Տէր Յիսուս Քրիստոս... որորմիր... մեղաւոր աւագերէց Յովհաննէսին՝ Գիշի որդուն, որ այս գիրքը գնեցի եւ 254 տարի յետոյ այս ցանկը կազմեցի 1225 թուականին»:

Անշուշտ հնարաւոր չէ, որ Յովհաննէս Աւագերէցը ձեռագիրը գնելուց 254 տարի յետոյ կազմէր ժամանակագրութիւնը: Մասնագէտները (Հ. Յ. Տաշեան, Վ. Յակոբեան, Ա. Մաթեւոսեան) ելքը գտել են ենթադրելով, թէ Յովհաննէսը գիրքը գնել է նրա ընդօրինակման թուականից 254 տարի յետոյ: Այսպիսի վերծանութեանը նպաստել է այն, որ ընդօ-

րինակման թուականի (971) եւ գիրքը գնելու ժամանակի (1225 թ.) միջեւ ընկած ժամանակամիջոցը կազմում է 254 տարի: Բայց սա պատահաբար համընկնող ժամանակամիջոց է, որն ստացուել է մեր ժամանակների գիտնականների հաշուումներով: Իսկ Յովհաննէսի օրօք այդ հաշուումները կատարելու հիմք չկար: Ձեռագիրն ընդօրինակուել է տարբեր ժամանակներում, չկար մի կայուն թուական, որի վրայ հենուէր Յովհաննէսը: Նոյնիսկ մեր օրերում ընդօրինակման թուական է համարուել մերթ 971, մերթ 981 թ.: Այսօր 971-ը մերժուած է եւ ընդհանուր ընդունելութիւն է գտել 981-ը: Ձեռագրի ընդօրինակման թուականը չափանիշ ընտրելու գաղափարն արհեստական է, որովհետեւ Յովհաննէսի յիշատակարանում այդ մասին խօսք չկայ: Եւ առհասարակ, այնքան էլ հաւանական չէ, թէ որեւէ գնորդ կարիք կը զգար հաշուելու, թէ քանի տարի է անցել ձեռագրի ընդօրինակման թուականից:

Քանի որ ժամանակագրութիւնն ունի երկու հեղինակների յիշատակարաններ, ինքնըստինքեան հասկանալի է, որ Յովհաննէսի յիշատակարանում նշուած թուականը վերաբերում է նրա ժամանակագրութեանը: Այս դէպքում «յետ ՄԾԴ (254) ամի զցանկս յաւրինեցի» նշանակում է Յովհաննէսը ժամանակագրութիւնն սկսել է կազմել ՄԾԴ թուականին յաջորդող տարիներով: Մինչեւ ՄԾԴ թուականը կազմել է Գորգը, որից յետոյ շարունակել է Յովհաննէսը:

Մաթեւոսեանը Յովհաննէս Աւագերէցին համարում է ոչ թէ ժամանակագրութեան հեղինակ, այլ Թղթեայ ձեռագրում ընդգրկուած նիւթերի ցանկը կազմող: Նա վկայակոչում է Յովհաննէսի յիշատակարանը եւ եզրակացնում է. «Ինչպէս տեսնում ենք, այստեղ գրքերը գնե-

լու եւ ցանկեր կազմելու մասին է խօսքը, եւ ոչ՝ ժամանակագրութիւն գրելու»⁸: Այս ընկալումն արդիւնք է «ցանկ» բառն ուղղակի իմաստով հասկանալու, բայց ներկայ դէպքում նկատի է առնուած ժամանակագրութեան մէջ գրանցուած տարիների ցանկը, որը եւ նկատի ունենալով Վ. Յակոբեանը ժամանակագրութիւնը հրատարակել է Յովհաննէս անուամբ: Այլ կերպ էլ լինել չի կարող, որովհետեւ Թղթեայ ձեռագիրն իր մէջ ընդգրկուած նիւթերի ցանկ չունի, որպէսզի Յովհաննէսի յիշատակարանը վերաբերէր այդ ցանկին: Եթէ ցանկը գոյութիւն ունենար, բնականաբար յիշատակարանը կը գրուէր նրան կից, այնինչ այժմ այն գրուած է ժամանակագրութեան մէջ, որպէս նրա շարունակութիւն, եւ յիշատակագիրն էլ յայտնում է, որ նկատի ունի հէնց այն տեքստը, որին կցուած է ցանկը՝ «զցանկս յաւրինեցի»:

Յովհաննէսը ՄԾԴ թուականին նախօրոք տարիների ժամանակագրութիւնը հասցրել է մինչեւ 1083 թ.: Վերջին տասնամեակների վերաբերեալ նշումները բաղկացած են միայն թուականներից, առանց որեւէ դէպք յիշատակութեան: Ինչպէս Գորգը (որն ապրել է 981 թ. Ղուկասի ընդօրինակած «Կայսերքից» յետոյ) այնպէս էլ Յովհաննէսը (որը ժամանակագրութիւնը կազմել է 1225 թ.) դէպքերի գրանցումը չեն հասցրել մինչեւ իրենց սպրած տարիները: Գորգի դէպքում հնարաւոր է, որ նա շարունակած լինէր մինչեւ իր ժամանակները, եւ Յովհաննէսը ՄԾԴ-ից յետոյ շարունակել իւրովի: Իսկ Յովհաննէսի շարունակածը հասնում է մինչեւ Բագրատունեաց թագաւորութեան անկման տարիները: Որոշ մատենագիրներ անկման տարի են համարում վերջին թագաւոր Գագիկի սպանութեան թուականը: Մատթէոս Ուռհայեցին նշում

է 1079 թ.։ Ինչպէս երեւում է, Յովհաննէսին յայտնի է եղել 1083 թ.։ Հնարաւոր է, որ Յովհաննէսը որոշած լինի կազմել քրիստոնեայ Հայաստանի թագաւորութեան ժամանակագրութիւնը, սկսելով առաջին «Հայ» թագաւոր Աբգարով, աւարտելով վերջին քրիստոնեայ թագաւոր Գագիկով։

Մաթեւոսեանը յայտնում է, որ Դաւիթ քահանան եւ իր որդի Ղուկասը մատենագիրներ են, որոնք գրել են Թղթեայ ձեռագրում որոշ փոփոխութիւններով պահպանուած «Կայսերք կոչւող մի աշխատութիւն. «Կայսերքը Ղուկասի գրածն է, որը նա յօրինել է իր «Հօր՝ Դաւիթ քահանայի հետ»¹⁰ «Դաւիթ քահանայի մատենագիր լինելու յանգամանքը... յայտնի է դառնում ուղիղ հազար տարի յետոյ»¹¹։

Երբ որեւէ մասնագէտ յայտնում է, որ իր «ուսումնասիրութիւնը հայագիտութիւնը հարստացրեց մի շարք յայտնութիւններով,» այդ դէպքում բարեկամ ընթերցողը վարակւում է անզուսպ ոգեւորութեամբ, եւ մենք տասնամեակներ առաջ մեծ խանդավառութեամբ արձագանքեցինք «Քննիկոնի» յայտնութեանը, բայց երբ ինքներս էլ կամեցանք հաստատել մեր ողջունած վարկածը եւ այդ նպատակով խորացանք նիւթի մէջ, զգացինք, որ մեր տպաւորութիւնը մակերեսային է։ Բարեկամին հաստատելու նպատակով ենք սկսել զբաղուել նաեւ «Աթանաս Տարօնացու» խնդրով։ Սակայն այս անգամ մեզ սթափեցրեց յայտնութիւնների շատութիւնը։ Հայագիտութիւնը միանգամից հարստացւում է երեք նոր մատենագիրներով (Աթանաս Տարօնացի, Դաւիթ քահանայ, Ղուկաս) եւ Մովսէս Խորենացու «չորրորդ գրքով»։ Մաթեւոսեանը յայտնում է, որ Թղթեայ ձեռագրում պահպանուել է Մովսէս Խորենացու

«չորրորդ գիրքը»։ Մենք այդ ձեռագրում չենք գտնում նշուած գիրքը։ Ինչ վերաբերում է երեք մատենագիրների յայտնութեանը, ապա Թղթեայ ձեռագրում չկան նաեւ այդպիսի մատենագիրներ։

Մենք հարկադրուած ենք միանգամից երեք մատենագիրների յայտնութիւնը ժխտել։ Այն, ինչ Մաթեւոսեանը մատուցում է որպէս Դաւիթի եւ որդու աշխատութիւն, որում «օգտագործուած է Աթանասի կորած երկը», իրականում գոյութիւն չունի։ Այն շփոթուած է Գորգի ժամանակագրութեան հետ։ Իսկական «Կայսերքը» Անանիա Շիրակացու «Կայսերք Հոռովմոց, թէ որչափ ամբ կալան» երկն է։ Ղուկասը պարզապէս այդ երկն արտագրող գրիչն է, իսկ նրա հայր Դաւիթը՝ ձեռագրի ստացողը։ Հենց Շիրակացու երկի վերնագրի տակ Դաւիթը գետեղել է մի յիշատակագրութիւն, որում յայտնում է, որ ինքը ձեռագրի ստացողն է. «Զ. Դաւիթ քահանայ յիշեցնիք ի Քրիստոս՝ զստացող սուրբ գրոցս»¹²։

Այսպիսով բոլոր երեք «մատենագիրներն էլ» վերանում են ասպարեզից որպէս Թղթեայ ձեռագրից ստացուած ոչ ճիշտ պատկերացումների արգասիք։

Մաթեւոսեանը Հայագիտութիւնը հարստացրած յայտնութիւն է համարում նաեւ Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» աւարտի իր յայտնաբերած 474 թուականը։ Գորգի Աղիւսակում ՆՀԴ (474) թուականի դիմաց գրուած է. «Մովսէս Խորենացի փիլիսոփայ եւ մատենագիր»¹³։ Թէեւ «Հայոց պատմութեան» աւարտի մասին խօսք չկայ, բայց Մաթեւոսեանը գտնում է, որ 474 թուականը աւարտի թւականն է եւ՝ որ «Աթանաս Տարօնացին վերջ է տալիս ... տատանումներին»¹⁴։ Տատանումները եղել են ոչ միայն բանասիրութեան մէջ, այլեւ

միջնադարում։ Այսպէս, օրինակ, Սամուէլ Անեցին նշում է 466 թուականը. «ՆԿԶ (466) Աստանոր աւարտումն Պատմութեան Հայոց գրոյն Մովսիսի»¹⁵։ Սակայն Անեցու գրածը Մաթեւոսեանին անյայտ է մնացել։ Յայտնի լինելու դէպքում Աթանաս Տարօնացին չէր կարող վերջ տալ տատանումներին, որովհետեւ Անեցին իրական ժամանակագիր է, իսկ Աթանասը՝ մտացածին։ Մաթեւոսեանը չի նկատել 474 թուականից մի քանի տող վերեւ գտնւող յետեւեալ տեղեկութիւնը. «Մասրոբ է (7) գիր յաւելեաց եւ շինեցաւ դպրութիւն»¹⁶։ Սա «Երբ դարու ապրած Աթանաս Տարօնացին», գրել չէր կարող։ Մեսրոպ Մաշտոցը հնարել է ոչ թէ 7, այլ 36 տառ։ Իսկ եթէ գրել է Աթանասը, կը նշանակի նա վստահելի պատմիչ չէ եւ չի կարող տատանումներին վերջ տալ։

Մաթեւոսեանը Սամուէլ Անեցուն վկայակոչում է «492 թ., շարականներ յօրինելու առթիւ»¹⁷։ Սրանով նա ցոյց է տալիս, որ ինքը ծանօթ է եղել Անեցու այն միեւնոյն էջին, որում պատմիչը յայտնում է Խորենացու Հայոց պատմութեան աւարտի մասին։ Այս էջում գտնւող երկու տեղեկութիւններից մէկը նա տեսել է, միւսը՝ ոչ։

Սեբէոսի Պատմութեանը կից հատուածում (Անանուն) գրեթէ բառացի արտագրուած է Ստեփանոս Տարօնացի Ասողիկից մի հատուած, որի մասին յայտնուած է քաղուածքի վերնագրում. «Այդ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացույ եւ Ստեփանոսի Տարօնացույ»¹⁸։ Մաթեւոսեանն առաջարկում է «Ստեփանոս Տարօնացին» դարձնել «Աթանաս Տարօնացի»¹⁹, այն դէպքում, երբ Սեբէոսի Պատմութեան հատուածում գտնում ենք Հէնց Ստեփանոս Տարօնացուց քաղուած հատուածը։

Եթէ անգամ ընդունենք բանասիրութեան մէջ բազմիցս արծարծուած այն տեսակէտը, որի համաձայն Սեբէոսն ինքն է շարագրել մեզ հետաքրքրող հատուածը, դարձեալ այն չի կարող համարուել Աթանասից քաղուած, որովհետեւ յատուածը չի դադարում գտնուել նաեւ Ասողիկի երկում։ Իսկ Ասողիկն իրէն յայտնի պատմիչներին թուարկելիս յիշատակում է Սեբէոսի եւ ոչ՝ Աթանասի անունը։

Եթէ անընդհատ Մաթեւոսեանին ընդառաջելով ընդունենք, որ Ասողիկն օգտուել է Աթանասից, բայց մոռացել է նրա անունը յիշատակել, այս դէպքում Աթանասը դարձեալ ու դարձեալ կը հեռանայ Մաթեւոսեանից, որովհետեւ Մաթեւոսեանի կարծիքով Աթանասը գրել է «Հոռովմոց ժամանակագրութիւնը», այնինչ Սեբէոսի եւ Ասողիկի երկերում գտնւող հատուածը բովանդակում է Պարսից եւ Հայոց Արշակունի թագաւորների ցանկը։

Այսպիսով, Աթանասի համար վկայակոչուած երկու աղբիւրներն էլ (Դաւիթ քահանայի եւ Ղուկասի «Կայսերքը» եւ Սեբէոսը) վերանում են ասպարեզից եւ Աթանասը մնում է օգուտ կախուած վերացական անուն։

Իսկ որտե՞ղից է Մաթեւոսեանը վերցրել Աթանասի անունը։ Գաղտնիքը բացայայտում է Թղթեայ ձեռագրի 156-րդ թերթը։ Այն սկսւում է այսպէս. «Երբ յայցեաց ժամանակագրութիւնք, Եղիմացուց (Եղովմացուց - Գ. Ա.), Հոռովմոց, Եգիպտացուց, Հեղղենացուց, Եթովպացուց, Ասորուց, Յունաց»։ Թւում է, թէ սա վերնագիր է, որից յետոյ յաջորդելու են նշուած ժամանակագրութիւնները կամ նրանց վերաբերող ինչ-որ բան։ Բայց ձեռագրում այդպիսի բան չկայ։ Մնում է մտածել, որ նախադասութեան սկիզբը

մնացել է 156-րդ թերթին նախորդած եւ մեզ չհասած թերթի կամ թերթերի վրայ: Մեզ հասած վիճակում նախադասութիւնը կիսատ է. յայտնի է, թէ ինչու են թուարկում ժամանակագրութիւնները: Յաջորդ նախադասութիւնում յայտնում է, որ ժամանակագրութիւններից մէկը՝ «Հոռովմոց ժամանակագրութիւնը» շարադրուած է կամ շարադրուելու է ինչպէս Եւսեբիոսի եւ Աթանասի ժամանակագրութիւնները. «Լաւ համարեցայ զՀոռովմոցն զՍեբեայ եւ զԱթանասի ժամանակագրութիւնն շարադրել»²⁰: Նախադասութիւնը քերականորէն անկանոն է: Ինչպէս էլ վերծանելու լինենք, գործունենք «Հոռովմոց ժամանակագրութեան» հետ: Այդ ժամանակագրութիւնը նոյնպէս թղթեայ ձեւագրում չկայ: Նախադասութիւնում Եւսեբիոսի եւ Աթանասի առկայութիւնը բացատրութեան կարօտ է: Ներկայ վիճակում անբացատրելի է: Միակ անառակելի փաստն այն է, որ անկախ նրանից, թէ 156-րդ թերթից առաջ գտնուած թերթերը կորել են, թէ ոչ, ութ ժամանակագրութիւններից ոչ մէկը, նրանց թուում նաեւ Աթանասի անունը պարունակող ժամանակագրութիւնը, մեզ հասած թղթեայ ձեւագրում չկայ: Հետեւաբար Մաթեոսեանը պէտք է ուշադիր զննել ձեւագրիչը եւ նրանում չփնտրել այն, ինչ չկայ:

Հին ազգերի ժամանակագրութիւնները մեզ յայտնի են ըստ թղթեայ ձեւագրում յունարէնից հայերէն թարգմանուած Հիպոդիտոսի ժամանակագրութեան եւ Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի»: 156-րդ թերթի սկզբում թուարկուող ութ ազգերի ժամանակագրութիւնները նոյն բնոյթի են: Աւելին. «Լաւ համարեցայ զՀոռովմոցն զԵւսեբեայ եւ զԱթանասի ժամանակագրութիւնն շարադրել» արտայայտութիւնը բնոյթով նոյնն է, ինչ Հիպոդիտոսի ժամանակագրութիւնում

առկայ համապատասխան նախադասութիւնները. «Լաւ համարեցայ համառատիւ ցուցանել եւ վասն եկաց ազգաց»²¹, «Եւ զայս եւս լաւ համարեցայ յայտ առնել քեզ զանգէտ կողմանս ամենայն ազգաց»²²: «Լաւ համարեցայ» դարձուածքը կայ Հիպոդիտոսի ժամանակագրութեան նաեւ յունարէն բնագրում²³: Այս ամէնը խօսում է այն մասին, որ թղթեայ ձեւագրում Աթանասի անուամբ պէտք էր որոնել յոյն Աթանասի ժամանակագրութեան հետքերը: Եւ քանի որ այս ձեւագրում չկան ո՛չ յոյն, ո՛չ էլ հայ Աթանասների հետքեր, մեզ մնում է վերադառնալ դարձեալ այն մտքին, որ Աթանասի անունը պարունակող նախադասութիւնը վերաբերում է իրենից առաջ գտնուած մի բնագրի, որը մեզ չի հասել:

Աթանաս անունով հայ պատմիչ յայտնի է: Մաթեոսեանն իր ենթադրած Աթանասին նոյնացրել է Գլակայ վանքի վանահայր Աթանասի հետ: Վերջինս յայտնի է որպէս 551 թուականով սկսուող Հայոց տոմարի հիմնադիր: Տեսականորէն շատ հնարաւոր է, որ տոմարագէտը նաեւ ժամանակագրութիւն կազմէր: Բայց տեսականորէն հնարաւոր է նաեւ, որ Գլակայ վանքի վանահայրը շարական գրած լինէր: Սակայն տեսական հնարաւորութեան վրայ հենուած չենք կարող ներսէս Շնորհալու շարականները վերագրել վանահօրը: Այդպէս էլ Մաթեոսեանը չպէտք է Գորգի աղիւսակը վերագրել միայն տեսական հնարաւորութեամբ օժտուած Աթանասին:

Մաթեոսեանը Գորգի ժամանակագրութեան մէջ տեսել է ոչ միայն Աթանաս պատմիչի, այլեւ Աթանաս տոմարագէտի հետքեր: Նա «սկիզբն արարի նոր թուականիս» արտայայտութիւնը վերծանել է այնպէս, թէ վանահայրը յայտնում է իր ստեղծած նոր թուականի՝ Հայոց տոմարի

մասին: Ծանօթանանք արտայայտութիւնը պարունակող հատուածին ամբողջութեամբ. «ՅԱդամայ ցնոր թուականս ամբ ՅՃԾԶ (6156): Դարձեալ սկիզբն արարի նոր թուականիս՝ ԼԴ (34) ամէն Յուստիանոսի կայսեր եւ ԼԱ (31) ամէն Խոսրովու»²⁴: Ինչպէս տեսնում ենք, երկու անգամ հանդիպում է «նոր թուական» արտայայտութիւնը: Առաջին անգամ յայտնում է, որ Ադամի ծննդից մինչեւ նոր թուականը (Քրիստոսով սկսուող) տեւել է 6156 տարի: Այդ տարիներից յետոյ ժամանակագիրն սկսում է պատմական դէպքերը գրանցել ըստ նոր թուականի, այսինքն ըստ այսօր համայն աշխարհում ընդունուած նոր տոմարի: Դրանից յետոյ ժամանակագիրը յայտնում է, որ դարձեալ սկսելու է նոր թուականը, այսինքն դէպքերը գրանցելու է այս անգամ ըստ Հայոց նոր տոմարի: Եւ իսկապէ՛ս, Գորգի ժամանակագրութիւնում պատմական իրադարձութիւնների գրանցումն ընթանում է նախ ըստ այսօր ամենուրեք ընդունուած տոմարի, որից յետոյ սկսում է գրանցումն ըստ Հայոց տոմարի. «Դարձեալ սկիզբն արարի նոր թուականիս»: Եթէ այս տողերի հեղինակը լինէր Աթանասը, կը ստացուէր այնպէս, որ նա մի անգամ արդէն ստեղծել էր տոմարը եւ այժմ «դարձեալ սկիզբն արարի նոր թուականիս»: Սակայն իրականութիւնն այն է, որ տողերը պատկանում են Գորգին, որը ներկայացնում է իր կազմած ժամանակագրական աղիւսակում կիրառուած տոմարական հաշուների կարգը: Այստեղ Աթանասի կողմից Հայոց տոմար ստեղծելու մասին խօսք չկայ:

Մտացածին պատմիչն այս անգամ էլ է կորցնում իր գոյութեան մասին վկայող գրաւոր հիմքերը:

Իրադարձութիւնները գրանցելու հա-

մար Հայոց տոմարն ընտրելն ինքնին մերժում է Աթանասին, որովհետեւ հազիւ թէ «Հոռովմոց ժամանակագրութեան» համար կիրառուէր Հայոց տոմարը:

Գորգի աղիւսակը համաժամանակեայ ժամանակագրութիւն է. որն սկսում է Օգոստոս կայսեր եւ Աբգար թագաւորի տարիներով. «Աւգոստոս թագաւոր ամս ՄԶ... Ի սորա ԽԲ ամին ծնանի Քրիստոս ի սկզբան ամին Աբգարայ Հայոց թագաւորի»²⁵: Այս տեղեկութիւնները ներկայացնելուց յետոյ Գորգը յայտնում է, որ դրանցով է սկսելու ժամանակագրութիւնը. «Եւ արդ եզի ի կարգի»: Եւ իսկապէ՛ս, իր յայտնած տեղեկութիւնները նա դնում է ժամանակագրական կարգի մէջ. «Աւգոստոս ՄԶ... Աբգար ԼԶ»²⁶: Որ ժամանակագրութիւնն սկսում է Աբգար «Հայոց թագաւորով», դրանում ոչ ոք չի կասկածել, որովհետեւ նրան նախորդող տեքստերը ժամանակագրութեանը չեն առնչում ո՛չ ձեւագրական տուեալներով, ո՛չ էլ բովանդակութեամբ: Վ. Յակոբեանը, որը նախապաշարուած էր Աթանաս, Դաւիթ եւ Ղուկաս մտացածին մատենագիրներով, ժամանակագրութիւնը հրատարակել է բնականաբար այնպէս, ինչպէս ձեւագրում է: Բայց նրա հրատարակածը խանգարում է Աթանասին, այդ իսկ պատճառով է Մաթեոսեանը գրում է. «ժամանակագրութեան սկզբում Աթանաս անուան յիշատակութիւնը անյայտ է մնացել Վ. Յակոբեանին»²⁷: Իրազեկ ընթացողն անշուշտ չի հաւատում, թէ մեր օրերի ամենաերեւելի հայագէտներից մէկը, ինը ստուար հատորներով բնագրեր (Հայոց կանոնագիրքը, Մանր ժամանակագրութիւններն ու յիշատակարանների տպագիր եւ անտիպ ժողովածուները) հրատարակութեան պատրաստելու ընթացքում հազարաւոր ձեւագրեր ուսումնասիրած հմուտ ձեւագրագէտը կարող

էր Գորգի ժամանակագրութեան սկզբում չտեսնել Աթանաս անունը: Բարեբախտաբար Թղթեայ ձեռագիրը գոյութիւն ունի: Գորգի ժամանակագրութեան սկիզբը գտնուում է 158թ էջում: Ամէն ոք, անկախ գրաբար իմանալ-չիմանալուց, կարող է տեսնել, որ ժամանակագրութեան սկզբում Աթանաս անուն չկայ:

Մաթեւոսեանը չի յայտնում, թէ Յակոբեանն ո՞ւմ անուամբ պէտք է հրատարակէր բնագիրը: Եթէ Աթանասի անուամբ հրատարակէր, հերքած կլինէր Մաթեւոսեանի իսկ վարկածը, որի համաձայն Աթանասի գրածը կորել է: Աթանասը շատ-շատ կարող էր ժամանակագրութիւնում օգտագործած լինել որպէս աղբիւր, բայց ո՞ր տեքստն է հրատարակում իր մէջ օգտագործուած աղբիւրների անուններով: Յակոբեանը ժամանակագրութիւնը հրատարակել է ոչ թէ համաձայնեցնելով իր պատկերացումներին, այլ ելակէտ ունենալով յիշատակարանում յայտնուող հեղինակի անունը: Այդ յիշատակարանում չկայ ոչ մի Աթանասի անուն: Ժամանակագրութեան հեղինակը Յովհաննէս Աւագերէցն է, որը բացայայտ յայտնում է, որ ինքն է յօրինել ժամանագրական ցանկը. «զցանկս յաւրինեցի»:

Մաթեւոսեանը արհեստականօրէն Գորգի ժամանակագրութեանն է միացել նրանից երեք էջով հեռու գտնուող այն նախադասութիւնը, որում առկայ է Աթանասի անունը որպէս «Հոռովմոց ժամանակագրութեան» հեղինակի անուն: Մի կողմ թողնելով այն յանգամանքը, որ Յակոբեանի հրատարակածը՝ «Հոռովմոց ժամանակագրութիւն» չէ, յիշեցնենք, որ Գորգի ժամանակագրութիւնը Աթանասի անունից բաժանուած է երեք էջանոց մի տեքստով, որը նոյնպէս «Հոռովմոց ժամանակագրութիւն» չէ: Աթանասի հետ

միասին յիշատակում է նաեւ Եւսեբիոսը, որը հաւասար «իրաւունքով» պէտք է Մաթեւոսեանի կողմից ներկայացուէր որպէս ժամանակագրութեան հեղինակ: Այս դէպքում կը յայտնուէինք շատ հետաքրքիր մի վիճակում: Կը պարզուէր, որ յոյն ժամանակագիրը Գորգի ժամանակագրութեան հեղինակն է:

Եթէ Աթանասի եւ Եւսեբիոսի անունները ձեռագրում գտնուէին իսկապէս Գորգի ժամանակագրութեան սկզբում, Յակոբեանի նման ուշադիր բնագրագէտը պէտք է ենթադրէր, որ տեղի է ունեցել գրչական թիւրիմացութիւն, նշանաւոր յոյն մատենագիրների անունները վրիպակաբար յայտնուել են հայ ժամանակագրի երկի սկզբում: Միեւնոյն թղթեայ ձեռագրի 29ա էջու Անանիա Շիրակացու անուամբ ընդօրինակուած է յոյն մատենագիր Փիլոնի երկը: Նման բազմաթիւ օրինակներ կարելի է ցոյց տալ ձեռագրերում: Յակոբեանին մեղադրելն արդիւնք է Թղթեայ ձեռագրի մասին սխալ պատկերացման:

Մաթեւոսեանը ոչ միայն Յակոբեանի հասցէն ուղղուած մեղադրանքը, այլեւ ընդհանրապէս իր բոլոր պատկերացումները ընթերցողին ներկայացնում է որպէս հաստատ փաստ, որով շահում է ընթերցողի վստահութիւնը: Նա այդպէս է ներկայացրել նաեւ Գորգի աղիւսակում Եւսեբիոսի «ներկայութիւնը»: Իբր աղիւսակում ամեն ինչ այնպէս է, ինչպէս Եւսեբիոսի «Քրոնիկոնում». «Պատմական փաստերը, դէպքերը, ժամանակը, տեղի եւ այլն ներկայացուած են հարազատօրէն, ճշգրիտ, պահպանուած է ժամանակագրութեան յաջորդականութիւն»²⁸: Այս ընդհանրացնող յայտարարութիւնը հաստատելու նպատակով նա Եւսեբիոսից քաղում է ընդամենը մէկ հատիկ օրինակ եւ նոյնիսկ այժ միակ օրինակում սխալ-

ուում է:

Նրա բերուած օրինակը հետեւեալն է. «Աւգոստոս ամս ԾԶ եւ ամիսս Զ... Աւգոստոս Սեբաստոս անուանեցաւ եւ զՍեքստոս ամիս Աւգոստոս անուանեաց... ԽԲ, Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ ի Բեթղեմէմ Հրէաստանի ծնանի»²⁹: Եթէ այս տողերի հիման վրայ Գորգի ժամանակագրութիւնում որեւէ տեղեկութիւն յայտնուած լինէր, կը պարզուէր, որ «Հոռովմոց ժամանակագրութիւնը» Գորգի ժամանակագրութիւնն է, հետեւաբար այս ժամանակագրութեանը կը միացուէր նաեւ Աթանասի անունը: Բայց, եթէ Մաթեւոսեանին յայտնի լինէր, որ Գորգի ժամանակագրութեան աղբիւրը ոչ թէ Եւսեբիոսն ու Աթանասն են, այլ Անանիա Շիրակացին, նա կը դիմէր Շիրակացուն եւ կը տեսնէր, որ Գորգի ժամանակագրութիւնում, օգտագործուած է ոչ թէ իր ներկայացրած Եւսեբիոսեան հատուածը, այլ Շիրակացու գրածը. «Աւգոստոս ամս յիսուն եւ վեց... զՍեքստոս ամիս Աւգոստոս անուանեաց վասն ի նոյն ամսոյն իւրոյ ծննդեանն... Սորա քառասուներորդ երկրորդ ամի ծնանի Յիսուս Քրիստոս ի Բեթղեմէմ Հրէաստանի»³⁰: Այս տողերի հիման վրայ Գորգը գրել է. «Աւգոստոս ամս ԾԶ: Սա զՍեքստոս ամի Աւգոստոս անուանեաց վասն իւրոյ ծննդեանն: Ի սորս ԽԲ ամի ծնանի Քրիստոս»³¹: Սա այն տեղեկութիւնն է, որով Գորգն սկսում է ժամանակագրութիւն եւ որով ապացուցում է, որ Գորգի յիշատակարանում «Ղուկասու գրած Կայսերքս» նշանակում է ոչ թէ մտացածին մատենագիրների, այլ Անանիա Շիրակացու «Կայսերքը»:

Եւսեբիոսից, Շիրակացուց եւ Գորգից մեր բերած քաղուածքները գրեթէ բառացի կրկնում են միմեանց: Նրանք այնքան նման են իրար՝ որ Մաթեւոսեանը Շիրա-

կացու գրածը շփոթել է Եւսեբիոսի գրածի հետ: Սակայն երեք քաղուածքները հնարաւորութիւն են ընձեռում բանասիրութեանը՝ ճշգրիտ կոչուող գիտութիւնների նման, այս դէպքում յանգել ոչ պակաս ճշգրիտ արդիւնքի: Մաթեւոսեանը Թղթեայ ձեռագրի նմանահանութիւնն ու նմանատպութիւնը հրատարակութեան պատրաստելիս բազմիցս առիթ է ունեցել կարդալու Շիրակացու այն հատուածը, որը նա շփոթել է Եւսեբիոսի հետ: Նա նոյնչափ յաճախ է կարդացել նաեւ նոյն ձեռագրում գտնուող Գորգի ժամանակագրութիւնը: Ծճգրիտ արդիւնքի յանգելու համար նրանից պահանջուած էր պարզապէս ուշադիր լինել: Երեք քաղուածքների համեմատութիւնը նրան ցոյց կը տար, որ Եւսեբիոսը չունի մի արտայայտութիւն, որն ունի Շիրակացին եւ որից օգտուել է Գորգը: Այդ արտայայտութիւնն է. «վասն ի նոյն ամսոյն իւրոյ ծննդեանն»: Օգոստոս կայսրը մինչ այդ «Սեքստոս» կոչուած ամիսը վերանուանել է «Օգոստոս» ի պատիւ իրեն: Այս տեղեկութիւնը Գորգը շարադրել է այսպէս. «վասն իւրոյ ծննդեանն»: Ընդամենը երեք բառի տարբերութիւն է, բայց վերացնում է գիտական շրջանառութեան մէջ դրուած այն թիւրիմացութիւնը, որի համաձայն «Հոռովմոց ժամանակագրութեան» առիթով յիշատակող Եւսեբիոսից (յետեւաբար՝ նաեւ Աթանասից) քաղուածքներ կան Գորգի ժամանակագրութիւնում: Թիւրիմացութիւնն այս անգամ վերացնում է ինքը Մաթեւոսեանը՝ Գորգի ժամանակագրութիւնում Եւսեբիոսից որեւէ քաղուածք չգտնելով:

Մաթեւոսեանի կողմից «Հայագիտութիւնը հարստացուած բոլոր յայտնութիւնները» վերաբերում են Թղթեայ ձեռագրին: Մենք ցոյց տուցինք, որ այս ձեռագրում չկայ յայտնութիւններից ոչ

մէկը: Յայտնութիւնները յայտնութիւնը խորհնացու «չորրորդ գիրքն» է, որը իբր յայտնաբերուել է դարձեալ Թղթեայ ձեռագրում: Դժբախտաբար յայտնաբերողին յայտնի չի եղել այս ձեռագրին նուիրուած օտարալեզու գրականութիւնը: Յայտնի լինելու դէպքում նա կ'իմանար, որ իր կողմից որպէս չորրորդ գրքի ապացոյցներ ներկայացուող քաղուածքները պատկանում են Հիպոդիտոսի ժամանակագրութեան Ալեքսանդրեան խմբագրութեանը, որն ստեղծուել է խորհնացուց յետոյ եւ որի յունարէն բնագրում նոյնպէս կայ այն, ինչ Մատենադարանը «գտել» է «չորրորդ գրքում»³²:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Մաթեոսեան Ա., Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» չորրորդ գիրքը, Ե., 1995, էջ 205: Այսուհետեւ՝ Մաթեոսեան:
- 2 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Ե., 1974, էջ 127 եւ Հայկական համաժողովրդական հանրագիտարան, հ. 1, Ե., 1974, էջ 127 եւ Հայկական համաժողովրդական հանրագիտարան, հ. 1, Ե., 1990, էջ 70:
- 3 Abgarian G., *The Matenadaran in Erevan*: -The Book collector, London, 1960, Summer, P. 149.
- 4 Մանր ժամանակագրութիւններ, կազմեց Վ. Ա. Յակոբեանը, Հ. 2. Ե., 1956, էջ Ծ-23: Հմմտ. Թղթեայ ձեռագիր, էջ 158բ-164ա:
- 5 Թղթեայ ձեռագիր, էջ 165ա:
- 6 Նոյն տեղում, էջ 49բ: Ամբողջ «Կայսերքը» ձեռագրում գրադրուած է 49բ-71բ էջերը: Այն հրատարակել է Ա. Արքայանեանը 1944 թ. Անանիա Օհրակացու «Մատենագրութիւնում» էջ 378-399:
- 7 Նկատի ունենք թղթեայ ձեռագրում գտնուող հատկապէս 54ա-54բ էջերը, որոնք Օհրակացու «Մատենագրութիւնում» համապատասխանում են 373-374 էջերին:

- 8 Մաթեոսեան, էջ 220:
- 9 Մատթէոս Ուոհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 217, 220:
- 10 Մաթեոսեան, էջ 207:
- 11 Մատենա գիտութեան եւ հաւատոյ Դատի քահանայի: Նմանահամութիւն, Ե., 1995, էջ 9:
- 12 Թղթեայ ձեռագիր, էջ 49բ:
- 13 Թղթեայ ձեռագիր, էջ 162ա:
- 14 Մաթեոսեան, էջ 211:
- 15 Սամուէլ Անեցի, *Հասարակաց ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1883, էջ 71:
- 16 Թղթեայ ձեռագիր, էջ 161բ:
- 17 Մաթեոսեան, էջ 211:
- 18 *Պատմութիւն Սեբէտի*, աշխատասիրութեամբ Գ. Վ. Արքայանեանի, Ե., 1979, էջ 55:
- 19 Մաթեոսեան, էջ 118:
- 20 Թղթեայ ձեռագիր, էջ 156ա:
- 21 Արքայանեան Ա. *Անանիա Օհրակացու մատենագրութիւնը*, Ե., 1944, էջ 363:
- 22 Նոյն տեղում, էջ 364:
- 23 Hippolytus werke, 4Bd, Die Chronik. Hergestellt von Adolf Barer... Nebst zin Beitrag von J. Markwart, Leipzig, 1929, S. 486, 494.
- 24 Թղթեայ ձեռագիր, էջ 162բ: Յովհաննէս Աւագերեցը Գորգի աղիսակն արտագրելիս եւ իր ժամանակագրութեան մէջ ներմուծելիս բաց է թողել «ԼԱ ամէն Խորովոյ» բառերը, որոնք երևում են նոյն ձեռագրի 190բ էջում ընթրիմակուած տեքստի տակից: Այս էջը կրկնագիր է:
- 25 Նոյն տեղում, էջ 158բ:
- 26 Նոյն տեղում, էջ 159ա:
- 27 Մաթեոսեան, էջ 220:
- 28 Նոյն տեղում, էջ 207:
- 29 Նոյն տեղում, էջ 206:
- 30 Թղթեայ ձեռագիր, էջ 50ա:
- 31 Նոյն տեղում, էջ 158:
- 32 Հիպոդիտոսի Ալեքսանդրեան խմբագրութիւնը տե՛ս մեր սոյն յօդուածի 24-րդ ծանօթագրութիւնում: Նրա եւ «չորրորդ գրքի» յարաբերութիւններին անդրադարձել ենք «Բազմավէպում» տպագրուող առանձին յօդուածում:

ԿԱՐԾԵՑԵԱԼ ՎԵՐԾԱՆՈՒՄՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ
«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԲՆԱԳՐՈՒՄ

Գուրգէն Սանուկեան

Գրիգոր Նարեկացու «Մատենա ողբերգութեան» երկում կան բառակապակցութիւններ, նախադասութիւններ, առանձին անուանումներ, որոնք կարօտ են մեկնաբանման, որով զբաղուել են միջնադարում, այնուհետեւ Յակոբ Նալբանդը¹ եւ Գաբրիէլ Աւետիքեանը² գրել են մեկնական աշխատութիւններ, որոշ վերծանումներ առաջարկել են եւ այլք: Հմուտ բանասէրներ Պ. Խաչատրեանի եւ Ա. Ղազինեանի աշխատասիրութեամբ բազմաթիւ ձեռագրերի հիման վրայ հրատարակուել է «Մատենա ողբերգութեան» երկի գիտահամեմատական բնագիրը՝ ծաւալուն առաջաբանով, տարբերակներով,³ որոնցում ոչ միայն տրուում են բնագրի հետ առնչուող բացատրութիւններ, այլեւ ի մի են բերուում մինչ այդ արուած վերծանումները: Ամէն ինչ մինչեւ օրս արուել է Հանճարեղ բանաստեղծին եւ նրա Հանրահռչակ երկին վայել մակարդակով ու նուիրումով:

Սակայն այն, ինչ կատարուած է այժմ, վեր է երեսակայութիւնից, գրեթէ իմաստազուրկ է եւ ոչ թէ լոյս է սփռում «Մատենա»-ի վրայ, այլ մթազնում ու աղաւաղում է այն:

Այսպէս, Հ. Միրզոյեանն իր խմբագրած «Բանբեր Երեւանի Համալսարանի» հանդէսի «Նարեկի ծածկագրութիւնների վերծանութեան փորձ» յօդուածում (2002, թիւ 3, էջ 67-84) ներկայացրել է «Մատենա»-ում հիմնականում տասներեք եւ մի քանի այլ վերծանումներ, որոնք վերաբերում են Նարեկացու ծննդեան թուականին, սոյն երկի որոշ գլուխներին

գրուելու ժամանակին, բանաստեղծի հօր՝ Խոսրով Անձեւացու ծննդեան եւ մահուան թուականներին, նոյնիսկ տարուայ եղանակներին:

Ըստ Հ. Միրզոյեանի՝ սոյն երկում կան բազմաթիւ ծածկագրութիւններ, որոնցից միայն մի մասն է առայժմ վերծանել:

Այո, որքան էլ ցաւալի է, պէտք է ասել, որ այստեղ եղած բոլոր վերծանումները սխալ են եւ գիտական հիմնաւորումից զուրկ: Դրանք պարզապէս պատահական համընկումներ են, բնագրի թիւրմբուման արդիւնք են եւ գրաբարի վատ իմացութեան հետեւանք:

Նա իր «վերծանումները» ներկայացրել է, այսպէս կոչուած, հերթական փաստերի միջոցով, ուստի եւ մենք էլ սկսենք «փաստերի» նոյնաշար հերքմամբ:

1) Փաստ առաջինի հերքումը

Մատթէոսի Աւետարանի 18-րդ գլխի 21-22 տողերում մարդկային անյիշաչարութեան մասին կայ այսպիսի փաստարկ: Պետրոս առաքեալը դիմում է Քրիստոսին եւ ասում. «Տէ՛ր, քանի՞ անգամ, եթէ եղբայրս իմ դէմ մեղանչի, պէտք է ներեմ նրան, մինչեւ եօթն անգամ»: Յիսուսը նրան ասում է. «Քեզ չեմ ասում, թէ՛ մինչեւ եօթն անգամ, այլ՝ մինչեւ եօթնասուն անգամ եօթը»: Ահա այդ նկատի ունենալով՝ Նարեկացին գրել է (Բան ԺԵ, տող 88-92)⁴.

Եթէ մարդկան կարգեցր զայս կէտ սահմանի մեծի պայմանի ի բարեվիճակդ քո կանոնաց՝